

Հետո կապած խոշոր խովճարին (3—4 ճկումը)¹՝ կապուն:

Զրագիստրից (գոլերից) կանեփի կապոցները հանելով, կանգնեցնում էին հենարանների մոտ, լավ չորացնում ու փոխադրում շենքերի մեջ կամ գիզում ու վրան պտեր քաշում՝ անձրեկց պտապարում:

Կանեփի սերմի կալսելը: Արտում թողած սերմացում՝ էգ ցողունները լավ հասունանալուց հետո քաղում, փոքր կապուններ էին կապում ու կանգնեցնում հենարանների մոտ կամ խովակներ կապում ու թողնում մինչև լավ չորանան, ապա դգուշությամբ հավաքում էին կալի մոտ:

2. ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես Տրապիդոնի նահանգի ամրողջ բնակչության, այնպես էլ համշենահայերի տնտեսության մեջ մեծ տեղ էին գրավում այգեգործությունն ու պտղարուժությունը: Առանձնապես եկամտարեր ճյուղ էր կաղնու մշակությունը, որի պահանջը մեծ էր, իսկ զրադմունքը՝ շահութարեր: Այն շրջաններում, որտեղ կաղինը առատ րերք էր տալիս, համշենահայերի գլխավոր ըղրազմունքը կաղնու այղիների մշակությունն էր: Ամեն մի տնտեսություն նվազագույն հողամաս էր հատկացնում հացահտիկների ու այլ մշակությունների համար, մնացյալը հատկացվում էր կաղնու այգիներին:

Նահանգում կաղինով հարուստ էին հատկապես Ցուրպայի և Սյուրմենեի վիճակները, Կիրասոն, Տրապիդոն, Թրիպոլի, Էլեհի, մասսամբ էլ Օրգուի շրջանները: 1908 թ. կաղինի մշակումն սկսում էր տորածվել նույն Սամսոնի գավառում:

Պտղատու այլ ծառերի համար առանձին հողամասեր լին հատկացնում են ձորենի, տանձենի, սալորենի և այլ պտղատու ծառեր մեջ ընդ մեզ անկում էին կաղնու այգիներում, արտերի եղբերին կամ տան շրջակայքում: Այդ պտղարեր տեսակներից, նույնպես, ստանում էին գգալիքանակությամբ բերք: Տարածված պտղներ էին ծվաղը, ռալը, թուղը, թութը, սերկեիլը, ընկույզը և այլն:

Բացի մշակովի պտուղներից, համշենահայերն, ինչպես նաև տեղացի այլ ազգեր, լայնորեն օգտագործում էին նաև անտառային վայրի պըտուղներ ու հտապտուղներ, որոնցով հարուստ էին մերձուղյա անտառները:

Հայրենի երկրում. պտղատու ծառերը, խաղողը էտելու սովորություն շկտր: Մարդ, խաղողի վաղը մեծանում էր տունց ճյուղահտելու, իր բնական աճիվ: Մարգիկ խնտմում էին միայն

Գետնին փոռում էին լայն ջուկեր (սփոռցներ), ապա վերցնում էին մի-մի կապուն: Ռոնում ջուկերի վրա ու թեթև հարվածներով սերմը թափում չուլի վրա, որից հետո այն մաքրում էին կալմաղերով ու էյնամ՝ քամուն տալիս: Քամուն տալու համար կանգնում էին բարձր պատվանդանի վրա ու ամանից սերմացուն քիլ-քիլ թափում:

Սերմացուի համար թողած ցողունները՝ խորշին, վերը նկարագրված եղանակով գնափում, թրծում ու վերցնում էին, որով և ավարտվում էր կանեփի նախնական մշակումն ու սկրվում էր վերամշակումը:

Արմատը՝ ժամանակին հողը փիրեցնում, ռուկից անում, կոտրված ճյուղերը արմատից կտրում, հեռացնում էին:

Կաղին: Կաղնին բազերով՝ թփերով աճող րուկս է, ճյուղերի հաստությունը (տրամագիծը) հասնում է 6—10 սմ, երկարությունը՝ 3—5 մ: Փալտանյութը ճկուն ու թեթև լինելու շնորհիվ րազմաղան գործածություն ունեցող շինանյութ է: Կաղինի գալար ճյուղերից հյուսում ու շինում էին զանաղան ճկի ու մեծության կողովներ (ծածել), ցանկապատ, իսկ հնացած փայտանյութից՝ տարրեր գործիքների կոթեր և ալլն:

Կան րազմատեսակ մշակովի, ինչպես նաև անտառային (վերի՝ վայրի) կաղնիներ: Հայրենի երկրում մշակովի (ընտանի) կագինիների ամենատարածված ու թանկարժեք տեսակներն էին.

Կիրասոնը՝ միշակ մեծության կաղին է, ժայռը սեպածե, յուղալիկությունը 60—70%, կեղեր թաւը ու րորակ: Կաղնու այգ տեսակը ամենից շատ տարածված էր Կիրասոն գավառակում, որտեղից էլ ստացել էր իր անունը: Միջանել կամ արապիզոն՝ միշին մեծության, յուգալիկությամբ քիչում է կիրասոն տեսակին. շատ տարածված էր Տրապիդոնի մոտակա շրջաններում (Սյուրմենե, Ցուրպայի, Պլատանտ): Ֆուռֆուռը տեսակի կաղինն է, 2—3 անգամ մեծ կիրասոն տեսակից, սակայն միշուկը փոքր է: Չէր դնահատվում որպես արգյանարեց տեսակ: Աճեցնում էին հաճույքի հտմար և որպես երկխոյական շիմաղալիք: Նրա միշից թել անցկացնելով, երկու ձեղով գարձնում ու ճիգ էին տալիս, որի հետեւանքով ստացվում էր «Փըռ-Փըռ» հնչուններ, այստեղից էլ անոնը՝ Ֆուռ-Ֆուռ. կամ Փըռ-Փըռ կաղին: Աճա-Փունաուղ կամ մայր կաղին՝ մեծությունը երկորդ տեղն է գըալում, կանծին (միշուկը) լեցուն, քտղցըտհում, թոյնանի՝ մինչտնկից

խոշոր, կեղենի համեմատությամբ կանծինը փոքր վաճառելու համար աննպաստ։ Տարածված էր նաև սփյուրի (սրածաւր) կամ խանումի եղունգ կոչված կողինը։ Խոշա-կաղինը անունն ստացել է Մյուրմեննի գավառակի նույնանուն զյուղից տարածվելու պատճառով։ Միջակ մեծությամբ և շուկոյում լավ զնահատվող տեսակ էր։ Ծանկը սիրդին մեծության, լեցուն պապովով (կանծի) կաղին է, որը դասվում էր լավաղույն կաղինների շարքին։ Հղայսի անսակը թե մշակովի չէր, սակայն խիստ բարակ կեղե ուներ, մասաներով թեթև սեղմելիս կենար կոտրվում էր։ Կաշաղակները շատ են սիրում այդ կաղինը, դրա համար էլ կոչվում էր ճղայտի (կաշաղակ) կաղին։ Խարունի մաս կոչվածը նուրբ ու երկար կաղնատեսակ էր։ Կաղինը թե հնարավոր է բազմացնել համարները շանելով, ստկայն այդ եղանակը չէին կիրառում, համարելով ոչ տրդունավետ։ Փորձառու կաղնարույժները վկայում են, թե հատիկներով ամեցրած կաղինի անկին որակյալ բերք չի առ Կաղնեթուփի բազմացնում էին ինքնարողորոշ տնկիններով (նույն է նաև ներկայումս), որոնցից 4—5 հաաը անկում էին մեկ րնի՝ օջախի մեջ։ Տնկինները բերք ոկում են տալ երրորդ տարին, հինդերորդ-վեցերորդ աարաց սկսվում է լիառաա բերքատվության շրջանը։ Կաղնությունը թիւրին համշենցինները բուլք են տնկանաւու։ Բուլքի խնամքը կատարվում էր սկալորդ բուսած տունկերը հեռացնելով ու քաղհանելով, թփի չորս բոյորը փորելով։ Հնացած ճյուղերը առահճանարար կորաաում, հեռացնում էին, թուղնելով դալար ճյուղերը։ Այսպիսով, բուկքը միտնամից ամբողջովին նորողվելու կարիք չի դպում։ Կաղնու այդիներում թփերի հեռավորությունը իրարից 3—4 մետր է, այնպես որ բերքը քաղելիս ճյուղերն իրար չեն խանդարում։ Կաղինի այլուն կաղնուա ևն ասում։

Կաղինի բերքահավաքը առանց փոխօգնության ու շտամպամ էլ առանց վարձու ուժի հնարավոր չէր լինում ժամանակին կատարել կաղին քաղելու աշխատանքին մասնակցում էին ընտանիքի աշխատունակ բոլոր անդամները, ըսկըսած 7—8 տարեկանից մինչեւ ալեոր ծերունիները։ Կանայք, անշափահասներն ու ծերունիները կաղին էին հավաքում, իսկ ուժեղ տղամարդիկ այն փոխազրում էին կալը Այն բնտանիքներում, որոնց աղամարդիկ պանդխտության մեջ էին, տան ամբողջ հողսը մնկնում էր կանանց, պատանիների ու ծերունիների վրա։ Երեկոյան կաղինարադիցից վերադառնալիս, յուրաքանչյուր աշխատավոր իր քթոցը կալ էր բերում կաղինով լցված։

Որքան էլ ուշաղրությամբ ու մանրակրկիտ աշխատեին կաղին քաղողները, տերեների մեջ աննկատ մնում էին կաղինով լեցուն ծուլութներ։ Այդ հատուկնա մնացած բերքը կոչվում էր կանծելոյս կամ ծալեիս։ Ալղ արդեն երիտասարդների դործն էր, կաղինի հիմնական բերքը հավաքելուց հետո, ալեն մեկը իր համար հավաքում էր որքան կարող էր անդամից ամբողջովին նորողվելու կարիք չի դպում։ Կաղնու այդիներում թփերի հեռավորությունը իրարից 3—4 մետր է, այնպես որ բերքը քաղելիս ճյուղերն իրար չեն խանդարում։ Կաղինի այլուն կաղնուա ևն ասում։

Յուրաքանչյուր կաղին քաղող պեաք է ունենար փսքրիկ կողով, որին քոց կամ մատնոց էին ասում ու 1,5—2 մետր երկարությամբ կեռիկավոր փայտածող՝ կոռզ (աղ. X), քթոցը ուսաթուկով կախ էին աալիս ուսից, կոռով ճյուղերը

քաշում ներքե ու, նյուղի արմատի կողմից սկսելով, ծուլութները քաղում, լցնում քթոցի կամ մատնոցի մեջ և ապա դրանց պարունակությունը պարպում կալաթների (մեծ քթոցի) մեջ։

Նախքան քաղել սկսելը կաղնուաները մաքրում էին մոլախոտերից ու փշերից, որպեսզի զեաին թափած հատիկները՝ ծուլութները կորչն։

Լցված կալաթները կալ էին տանուա մեծ մասամբ երիտասարդները։ Ամենածանր աշխատանքը բերքի կալ փոխաղրելն էր։ Երբեմն կաղնուաները զտնվում էին տնից 4—5 կմ հեռավորության վրա, զասիվեր վարերում։ Բերքատերը 60—80 օնանոց մեեական կալաթ շալակած, ճակատից բրտինքը ծորալսի, ստիպված էր իր ընտանիքի բարիքը հասցնել տուն։

Կաղինի բերքահավաքը առանց փոխօգնության ու շտամպամ էլ առանց վարձու ուժի հնարավոր չէր լինում ժամանակին կատարել կաղին քաղելու աշխատանքին մասնակցում էին ընտանիքի աշխատունակ բոլոր անդամները, ըսկըսած 7—8 տարեկանից մինչեւ ալեոր ծերունիները։ Կանայք, անշափահասներն ու ծերունիները կաղին էին հավաքում, իսկ ուժեղ տղամարդիկ այն փոխազրում էին կալը Այն բնտանիքներում, որոնց աղամարդիկ պանդխտության մեջ էին, տան ամբողջ հողսը մնկնում էր կանանց, պատանիների ու ծերունիների վրա։ Երեկոյան կաղինարադիցից վերադառնալիս, յուրաքանչյուր աշխատավոր իր քթոցը կալ էր բերում կաղինով լցված։

Որքան էլ ուշաղրությամբ ու մանրակրկիտ աշխատեին կաղին քաղողները, տերեների մեջ աննկատ մնում էին կաղինով լեցուն ծուլութներ։ Այդ հատուկնա մնացած բերքը կոչվում էր կանծելոյս կամ ծալեիս։ Ալղ արդեն երիտասարդների դործն էր, կաղինի հիմնական բերքը հավաքելուց հետո, ալեն մեկը իր համար հավաքում էր որքան կարող էր անդամից ամբողջովին նորողվելու կարիք չի դպում։ Կաղինու այդիներում թփերի հեռավորությունը իրարից 3—4 մետր է, այնպես որ բերքը քաղելիս ճյուղերն իրար չեն խանդարում։ Կաղինի այլուն կաղնուա ևն ասում։

Վայրի կամ վերի անտառալին կաղնու թիւրը ու միեղը արտաքինից ունշով չեն աարել վում մշակովի կաղինից։ Երբեմն հանդիպում էին վայրի կաղնու շյուղեր, որոնք արմաաախիլ չէին անում, այլ խնամում էին մշակովի կաղնուաներին հավաքար ու բերքը հավաքում։ Վայրի կաղինը նույնպես զանազան տեսակի է լինուա։ Մեծ

մասամր կեղեց խիստ կարծր է և առանց մուրճի կոտրելն անհնար, որի պատճառով էլ մշակովի կազնուն չէին խառնում: Այնուամենայնիվ, պատահում էին բարակ կեղեց ունեցող տեսակներ, որոնց կեղեց մատների ճնշումով կարելի էր կոտրել: Բացի այդ, վայրի կաղինը մշակովի կաղինից 20—30 օր ուշ էր հասումանում¹⁴:

Կաղինը կալսելու վայրը՝ հայուն նպատակահարմար է, որ քիչ պառակ՝ թեք լինի, որպեսզի տեղումների ժամանակ շուրջ լկուտակվի: Կաղնուտից բերած կաղինը կալի մեջ 4—5 տեղ լցնում էին իրար վրա, կոմբրովներ (կույտ) կաղմում: Հավաքում էին այնքան, որ բաց անելիս միանգամից կալի մակերեսը հավասար ժածկվի ու միօրինակ չորանա: Կաղինի ծովութները փրում, տարածում էին 8—10 սմ հաստությամբ՝ կալի ամրուց մակերեսով: Ամառվա արեի կիզիշ ճառագայթների տակ 4—5 օրվա ընթացքում մի կողմը լավ չորանում, ծովութները մասամր ճաքճքում-կոտրասվում էին, հատիկները թափվում: Կալվորները կաղինի թիերով կալի եղերքից սկսելով, շարք-շարք ծովութները շուրջ էին տալիս ու թողնում մինչեւ լավ չորանալը: Ապա արևմայներով (փողի) շարք-շարք ծովութներին հարվածելով, հավաքում էին մի տեղ: Այդ դորձողությամբ, որքան հնարավոր էր, կաղինի հատիկները անշատում էին ծովութից: Այնուամենայնիվ, որոշ քանակությամր մնում էր ծովութի մեջ: Այդ էլ ստիպում էր ծովութի փոխադրել ժածկի տակ, որպեսզի դաշտային աշխատանքից աղատ ժամանակ (շատ անգամ ձմեռվա ամիսներին) հատիկները մանրակրկիտ շոկեն: Մածկի բացակայության դեպքում ծովութի հավաքում էին կալի մի անկյունը, պինդ կոխկոտում, դոփում, կամարածե կոմբրուում ու իմփոռվ կամ ծեղով ժածկում:

Սովութից անշատված, կալի մակերեսին փոված հատիկները ցախավելներով մաս-մաս հավաքում ու քթոցներով փոխադրում էին մի հարմար տեղ ու կուտակում: Նպատակահարմար էր, որպեսզի կաղինի շեղը (կումբրով) րլրակի վրա լիներ, իսկ շուրջը (մի կողմից) ցած, քանզի քամուն տալր հեշտ էր լինում:

Կաղինը ծովութից, տերեկից ու այլ խջից

¹⁴ Ույանք վայրի կաղին կամ կաղնի առում են խազկաղնուն: շփոթելով այդ երկու առմները, Խողակաղնին համարիում կ անտառների թաղալոր, հասա ընով, երեմն 20—30 մետր բարձրությամբ, փայտանյութը բավականին դիմացկուն, կահուցքի ու շինարարության համար պիտանի: Մինչդեռ, ինչպես մշակովի, նույնպես և վայրի կաղինը, աճում են թիերով, ճյուղերի հասաւությունը հազվադեպ է պատահում, որ 10—15 ամ լինի, իսկ երկարությունը 4—5 մետրից ու ավելի:

մաքրում էին էլենելով (քամուն տալով): Էլենելը կատարում էին քամու ժամանակ: Կաղինը թիով վերցնելով, երկու ձեռքի ուժեղ շարժումով շրպըրառում էին քամու դեմ, ծուլութն ու այլ թերթե մանրութը (խիզ) անջատվում էր, իսկ կաղինը առանձին կուտակվում: Մաքրված կաղինը ասեիճանարար փոխադրում էին կօրօպ (ամբարը): Որպեսզի հավաքած բերքի մոտավոր քանակը հայտնի լիներ, պատասխանատու մեկը կաղինը կոռավ շափելով լցնում էր կողովների մեջ: Որպեսզի շշկոթվելը, տասը կոտ լցնելիս մի կաղին առանձնացնում էր: Այդպիսով տան մեծը բերքը ամբարելիս (կորոպ լցնելիս) արղեն գիտեր, թե որքան եկամուտ կարող է ստանալ և ըստ այնմ կարդավորում էր տնտեսությունը:

Կաղին էլենելը տղամարդկանց գործն էր: Երկու-երեք հոգով, փոխնիփոի կատարում էին այդ աշխատանքը: Կաղինը կալից կորոպ փոխաղիելուն մասնակցում էին ընտանիքի բոլոր աշխատումները: Այդ աշխատանքին շատ անգամ օգնության էին գալիս հարեանները, հարացատները, մաքրված, էլենված կաղինը անպայման նսւյն օրը պետք էր ամբարել: Եթե կաղինի վրա ցող նստի կամ թթօվի, փայլուն գույնը կը-կորցնի, հեշտությամբ կփշանա: Կաղինի բերքից ու կորոպի մեծությունից էր կախված կաղինի շեղքի հաստությունը: Որքան հաստ շերտով կուտակվեր կաղինը, այնքան հաճախ էր անհրաժեշտ խառնել, որպեսզի հավասար չորանա, տաքանալով շիշանա:

Եթե մինչեւ լաղուտի բերքահավաքը կտղինը իրացված-ծախված չէր, անհրաժեշտ էր լինում լցնել հատուկ շինված սարբիների (ամբար) մեջ: Ամբարը շինված էր լինում կորոպի շեղքում, տան ստիպաւմ (պատշդտմբ) կամ առանձին: Ամբար էին լցնում լավ շորացած կաղինը, որին այլև որակը կորցնելու վտանգ չէր սպառնում: Այնուամենայնիվ, ուշ-ուշ, պարբերաբար խառնում էին, որպեսզի ներքին շեղքը հովանա:

Տրապիդոնի մոտակա շրջաններում (Յուլուր, Սյուլրմենե) համշենահայերի հիմնական եկամբատարեր մշակույթը կաղինն էր:

1900-ական թվականներին մեկ օխա կաղինը արժեր 3—4 դուրուց (20—25 կոպեկ՝ մեկ կիլոգրամը):

Աև ծովի կովկասյան ափերում տարածված տրապիզն և կիրասոն տեսակի կաղինների նուստաստ ներմուծողները եղել են XIX դ. երկրորդ կեսին հայրենի երկրից դաշտած համշենահայերն ու հույները:

Ընկույզի (քնիկուզ) ծառերով հարուստ էին ինչպես անտառները, այնպես էլ տնտեմերձ հո-

գամասերը Շնկուղենիներ հատուկենտ տնկում էին արտերի, կազմուաների եղուրին, առանձին հսկմասեր չին հատկացնում։ Այնուամենայնիվ, կային բավականին տնտեսություններ, որոնք իրենց անամերձ հողերը կամ առանձին հոգամասեր հատկացնում էին ընկույզի մշակմանը, որի հնուեանրով այդ վայրերը կամ թաղերը կուլիւմ էին ընկույզու կամ ընկուզնոց։

Ընկուղենին բարձրանում է շուրջ 15—20 մետր, աերեները հոտավետ են, որը թարու վիճակում հավաքում և օղակապրծում էին ժողովրդական բժշկության մեջ Ընկուղենու փայաց շափականց թանկ էր զնահապում, նրանից պատրաստած կահալը և այլ իրեր իրենց ընական փայլով ու գիմացկունաթյամբ լավագույն ընկույզը կրկիտ էր կոչվում։ Ընկույզը հիմնականում գործածում էին սեփական կարիքների համար, Որոյ անասություններ այն վաճառքի էին հանում։

Ընկույզի ծառի կեզեից ու աերեներից, ինչպես նաև պտուղի արագաքին՝ փափուկ պայախանից՝ լալափայիգ (շուխ) պատրաստում էին որակյալ և ներկի Ընկույզի լավագույն տեսակը նույր կճեպավարն է, որը կուրելիս միջի կանօին (պրտզումիսը) ամրողաթյամբ անշապառ է։ Կճեպից գժվարությամբ լածանվող ընկույզը կրկիտ էր կոչվում։ Ընկույզը հիմնականում գործածում էին սեփական կարիքների համար, Որոյ անասություններ այն վաճառքի էին հանում։

Մաշնուրքը (շագանակ) համարվում է անտառային՝ վայրի ծառ ու շատերը համոզված են, որ նրա մշակովի տեսակը չկա, չի պահպատվում, Դա փաստորեն չի համագատասկանում իրականությանը։ Մեր հարեան Շանա գյուղում Հովսեիյանների ընտանիքը աարիների ընթացքում կարողացել էր շաղանակի մշակովի այնպիսի բարելավված աեսակ (տոնու¹⁵ մաշնուրք) ըստանալ, որը սովորականից 3—4 անգամ մեծ պտուղ էր տալիս, նրանք առանձին հողամաս էին հատկացրել մաշմուրքի ծառասաանին (մաշմաւինալ), որից սաանում էին առատ բերք ու վաճառում կրկնակի թանկ գնով, քան անտառային մաշմուրքը։ Որքան հնարավոր եղավ պարզել, կովկասյան ափերը զաղթող համշենահայերը մշակովի շագանակ ոչ մի տեղ չեն մշակել։ Մերին հող ունեցող համշենցին իր հողամասում անպայման մաշմուրքի մի քանի ծառ ունենում էր։

Շագանակն սկսում է ծաղկել մայիս-հունիսին, իսկ սկսուլը հասունանում է հոկանմբերնոյիները ամիսներին։

Պառուղ ուստում, աերեները շորացնում ու հաց թխելիս օգտագործում էին, փոռում փուլը տարած խմորի տակ, իսկ ծառը ծառայում էր որ-

պես հաստատուն հենակ՝ խաղողի որթերի համար։ Ինչպես ընկույզի, այնպես էլ մաշմուրքի փայտանյութը չի որգոտուա նրա մեջ շաղափուներ չեն գոյանուա, այդ պահանառով անգնահանելի շինանյութ է հատկապես կահույք պտտրաստելու համար։

Շտգանակի պառուղը, բացի կարծր մաշկից, ունի արտաքին փշածածկ պաայան, որին բոլ են ասում Յուրաքանչյուր թոլի մեջ 2—3 հտտիկ պտուղ է զեաեղված լինուա։ Շագանակի թոլը ինձորի սեծութիւն է, կուլ եկած ողնու նմտն հերքը հասունանալիս թոլը սեգրվում և հատիկները թափում են ներքն Ուժեղ քամիների ժամանակ հասած շագանակները կարկուտի պես թափում են։

Ինչպես հայրենի երկրում, այնպես էլ համշենցիների կովկասյան գաղթավայրերում (Սոչի, Տուապս, Մայկոպ) լտյանատարած հզամասեր ծածկվել են մաշմուրքի ծառերով, որոնք մեծ մասամբ գտնվում են ընակավայրերից 10—15 կմ և ավելի հեռավորության վրա։ Մաշմուրքի բերքահավաքին մասնակցում էին խմբերով՝ կանայք, աղամարդիկ, պատանիներ։ Հաճախ օրերով գիշերում էին ծառասաանների ժամանակավոր հյուղակներում։

Եթե ծառերից թափվածը բավարար չէին համարում, ճարպիկ պատանիներն ու երիտասարգները սկյուուի նման մագլցում էին ծառերի բարձունքը, ձեռքի ու ոտքի ցնցումներով շարժում ճյուղերը, անջապատճ հաաիկները թափում գետին։ Կաաարյալ շհասունացած թուերը ցած էին գցում երկար, 3—4 մետրանոց փայտածողերով (շիբուխներ) հարվածելով։ Այդիսիք առանձին հավաքում ու քարի կամ փայտի հտրվածներով րաց էին անում և հատիկները հանում։

Մաշմուրք հավաքողները՝ մեծ մասամբ կանայք ու երեխանները, որը գոգնոցը վեր քաշտծ, որը քթոցը ձեռքին, շարք-շարք ընթանում էին մաշմուրքի ծառերի տակով, թափած աերեները ձեռքի փայտով շրջում, մաշմուրքի հատիկները հավաքում, կցված քթոցները կամ գոգնոցներում հավաքածը զատարկում էին շվալների ու պարկերի մեջ։ Բարերախտություն էր, եթե մոտակա վայրում ընակիններ լինեին։ Ամրակազմ երիասարդները հավաքածը տանում էին ծանոթների մոա թողնում, իսկ հեաագայում՝ աղատ ժամանակ այն փոխագրում գյուղ։

Շագանակ հովագողների համար մեծ բավականություն էր հենց անդում՝ անտառում բոփոած (բոված) մաշմուրք ուստելի։ Հանգսաի ժամին մեկը նստում էր խարույկի մոա, մաշմուրքները սուր զանակով մեկիկ-մեկիկ խզում (կեղեր բա-

15 Տաճու—տեսային, ընտանի, մշակովի

ցում) ե, օշախի մեջտեղը րաց անելով, գրանք լցնուած էր այնտեղ, տաք մոխսիրով ու թեժ կրակով ծածկում և թողնում մինչեւ լավ բռֆովելը; Այնուհետեւ, րովմած շագանակները կրակից հանում, քիչ սառեցնում ու, բոլորվելով խարույկի շուրջը, անուշ էին անում: Երրեմն էլ, զվարճության համար, աննկատելի, մի քանի շագանակ առանց խգելու, անթեղում էին կրակի մեջ: Շագանակի կեղեր տաքությունից ուժանակի նման ճաթճաթելով կրտկ ու մոխիր էր սփոռում շորս կողմը, նսաղողներին ստիպում վեր ցատկել իրենց տեղերից:

Շագանակը պահեստավորելու եղանակները: ա. Թարմ վիճակում շտգանտկը երկար (4—5 ամիս) պահելու համար թաղում էին շոր հողում: Շուրջ 70—80 սմ խորությամբ փոսեր փորելով, շտգանակը աեղտվորում էին փոսի մեջ ու վրայից 15—20 սմ հաստությամբ հողաշերտ լցնելով, այն լավ դոփում-պնդացնում էին, որպեսզի օդ կամ ջուր լթափանցի: Զանկացտծ ժամանակ, հողը բացելով, ըստ պտհանջի վերցնում ու մնացածը նորից հողաշերտով լտվ ծածկում էին:

բ. Չորացած շագանակը պահպանելու համար տյա կիսախաշ անելով շարում էին թելերին, չոնթալ-չոնթալ (շտրան-շտրան) կապում, արեի աակ շորացնում և կախում ծածկ ունեցող զով տեղ՝ կորոպում, նուֆայում:

գ. Բոփոած վիճակում պահեստավորելու համար թարմ շտգանտկի կեղեր թեթև խղելով, փոփ մեջ շորացնում ու պահում էին շոր տեղում: Բոփոտծ մաշմուրգը օգտագործում էին նաև հացի հետ խառնելու համար. շտգանակը կեղերից մաքրելով, շրաղացում աղում, հաց թխելիս խառնում էին ալյուրին:

Ծվաղ: Տարտծված մրգերից էր (թուրքերեն՝ դարանիլ՝ սև պտուղ): Հայրենի երկրում վայրի ծվաղի ծառեր մեծ զտնգլտծներով հանդիպում էին անտառներում: Բաղմազան էին նաև ծվաղի մշակովի՝ ընաանի տեսակները: Ծվաղնին մրշտադալար, 4—5 մետր և ավելի րտրձությամբ, լայնանիստ, ճկուն. ճյուղերով, մեծ ու զանգվածեղ տերեններով, րարեակս ծառ է: Ծոնորհիվ ճկուն ճյուղերի ու փարթամ տերենների, ծվաղենին տնիոխտրինելի ընական կանտշապատնեշ է ընակավայրերը րուր ու րորտնից, հողմերից պաշտպանելու համար: Դժվար թե գտնվեր համշենայացի մի տնտեսություն, որի տնամերձի կամ շենքերի շորս բոլորը ծվաղի ծառեր լինեին: Այնուամենային, համշենահատյերը ծվաղը մշակում էին առաջին հերթին նրա զուրալի ու բուժական հտակություններով օժտված պտղի համար: Ծվաղի ողկույղը (նութը) շատ նման է սե ու խիտ

հատիկներով խաղողի ողկույղին, սակայն ծվաղի մսապտուղը պինդ է ու փոխազրման համար ավելի հարմար: Քաղցրարույր հոտ ունի ծէաղի սպիտակավում ծաղիկը:

Հայրենիքում ծվաղի ամենատարածված տեսակներն էին վաղուր, որը վաղահաս էր. մրգահատիկների մեծությունը միջակ կազինի չափ, կլոր, մսալի ու համով: Հասունանում է հուլիսօգոստոս ամիսներին: Աշնուն (աշնան) ծվաղի կամ սաւալիդից հատիկները վաղուրից փոքր ու քաղցրահամ էին: Այս տեսակից ստացվում է ծվաղի ամենաարակյալ չիր: Հասունանում է սեստեմբեր ամսին: Աշնուն ծվաղի ճութի հատիկները շաա ավելի խիտ ե զիմացկուն են, որի շնորհիվ թարմ վիճակում այն կարելի է 20—25 օր պահել: Ծվաղի էծպաւկ տեսակը իր անվանն արժանացել է հատիկների՝ այծի պտուկներին նման լինելու պատճառով: Հատիկի մեծությունը վաղուրի հատիկի շտփի է: Պտղի անախորժ լինելու պատճառով շափաղանց քիչ էր տարածված: Հասունանում է օգոստոսին: Ձեեկկենը չյութալի տեսակ է, միջին մեծության ու քաղցրության, որը հասունանում է սեպտեմբերին: Ծվաղի փետիկեն (փայտկեն) տեսակը տհաճ համ ունի, ուսելիս լեղուն կոտալում՝ կոպտանում է: Հասունանում է օգոստոսին:

Անտառույին՝ վայրի ծվաղը խիստ դառն է լինում, ուստի որպես սնունդ շատ քիչ էին օգտագործում: Վայրի ծվաղի պտուղը, ինչպես նաև տերենները (վերջինները հատկապես ձմռանը) օգտագործում էին որպես անասնակեր:

Համշենահայերն իրենց հետ բերելով ծվաղի տնկիներ¹⁸ (շլուղեր), Սե ծովի կովկասյան ափերում սկիզբ էին դրել այդ պտղի տարածմանը: Սուխումի շրջանի համշենահայերի շատ զյուզերում կարելի է հանդիպել ծվաղի ծառի մի քանի տեսակ. շատ սակավ դրանցից կարելի է հանդիպել նաև Սոչիի շրջակու գյուղերում (օրինակ՝ Վերին Լոռյում, Կտորովովկայում, Սորոկեկայում և այլուր):

Ծվաղի կտնաշ տերենները համշենտհայերը

¹⁸ Որպես տնկի ծառայում է ծվաղի զալար ճյուղը: Հաշող ու առաա արմատներով ծվաղի տնկի ստանալու համար ծառի՝ գետնին մոտ ճյուղը պառկեցնում են հողի մեջ փարած փոսում ու վրայից հողը լավ առիտոփում են ճյուղից լիներ են դուրս զալիս, որոնք և օգտագործում են որպես արեկի: Սերմից աճեցրած տնկին հաղող չի լինում և օգտակար պտղուղ չի տալիս: Որպես տնկի կարելի է օգտագործել նաև կարգած դալար ճյուղը: Կովկասում, մանավանդ ծովափնյա վայրերում, տարածվել է վայրի ծվաղին շտու նման մշապաւագար բուր ու բուժական (ոռաերեն՝ նօքրեալիկ): Որուարիչնիկ, որին հայերը ծվաղ են անվանում: սակայն ալզ տունկի պտղուղ համային համակությունները հիմնովին տարրերում են ծվաղի մրցերից, նուկնիսկ անտառային վայրի ծվաղից:

լայնորեն օդուագործում էին նաև ժողովրդական բժշկության մեջ:

Տաճառի երկրում խիսա աարածված էին ատնձի (տոնն) հետեւալ տեսակները. նունի-սի տանն (Ժիրեզ-արմուտի)՝ միջակ մեծության, անուշահամ պաղամսով: Մերքտհավաքը կատարվում է հունիս ամսին: Զաղացին (տեղերմեն-արմուտի) ահսակը անուն ստացել է շրաղացի բարի նման կլոր ձեռ ունենալու պատճառով: Երրահավաքը կատարվում է հովիս-օգոստոս ամիսներին. հասունանալիս Հյութալի ու քաղցր պտղամիար սուր շաղանակտգույն է զառնում: Երկար պահելու ժամար բաղում են կիսահաս վիճակում (հունտերը սեանալուց հեաոյ): Խարիսուզի տոննը (ձմերնուկա տանձ) հասունանալիս հիշեցնում է հաճելի համ ունեցող ձմերուկի մսեղիքը, որաեղից էլ ստացել է իր անունը: Հասունանում է սեպամերեր-Հոկտեմբեր տմիսներին: Զրեկին (Ժյուփ-արմուտի) աեսակի պատղամերը խոշոր են (2—3 հոսար 1 կղ), երրեմն մի հատը 700—800 դրիթարմ վիճակում ախսործելի չէ: Մեծ մտսամր օդապործում են թթու գրած (զարն գրած), որի շնորհիվ էլ ստացել է շրեկկեն անունը: Հասունում է նոյեմբեր-դեկտեմբեր սմիսներին: Հատիկենը հասունանում է ուշ աշնանը, պտղալը հավիթի մեծության է: Զով տեղում կտրելի է պտհել մինչեւ ապրիլ-մայիս ամիսները: Սա էլ շրեկկենի նման թթու զնելու լավագույն աեստկներից է: Մելքիկին (մեղրատանձ) տեսակը լինում է զանազան մեծության, բավականին քաղցր, մեղրահամ պտղամիս ունենալու հետեանքով է ստացել տյղ անունը: Հյութը մեղրի նման մածուցիկ է, հասունանում է հուկիս տմսին: Մտշկը գեղնավուն է, պտղամիս սպիաակ. դասվում է լավագույն աանձատեսակների շարքում, սակայն զիմացկուն չինելու պատճառով երկար պահել հնարավոր չէ: Այս տեստկից ախսործալի պահածու կամ չի էին պատրաստում, Հոմշենի տոննը միշին մեծություն ու քաղցրություն ունի: Թերենապը միշին մեծության, կիսաքաղցր տանձ է: Սա նույնպես թթու զնելու լավագույն տեսակներից է: Կոնեփիկենը միշին մեծություն ու քաղցրություն ունի: Հասունանում է կոնեփի հետ միամանակ, որաեղից ե սաացել է իր անունը: Երկար պահելու համար պիտին չէ: Սուլկուրապ կոչվող տանձատեսակը տարածվել է հումանուն՝ Սուլկուրի գյուղից: Հասունանում է հոկտեմբեր ամսին, պտղամիսը մուր գույնի է: Սա հարդի էր նըանով, որ կարելի է երկար պահել՝ մինչեւ փեաըրվար-մարա ամիսները: Գրշափը մանր, համեղ տանձ է, հասունանալիս դեղնավուն գույն է ստանում, բերքահավաքը օդուատոս ամսին ջյու-

կուրող տանօը (տալ-կրակ) խոշոր պտուղներով (հատը 700—1000 դրամ) անհամ տանձ է: Հասունանում է օդուատոսի վերջերին: Պահվում է ամիսներով: Դեղկենու պաուղը հավկիթից խոշոր է, պտղամիսը հյութալի, քաղցր, կեղեղ դեղին, որի պատճառով էլ ստացել է այդ անունը: Հասունանում է օդուատոսին: Խոշոր կապակ-արմուտի) հասունանում է հուկիսի վերջերին, պտղամիսը սպիտակ. երկար պահելու համար պիտանի չէ: Կումաւչխանեի տանձը միշին մեծության, քաղցրահամ տանձ է, տարածվել է Կյումուշխանե գավառից: Երկար պահելու համար պիտանի չէ: Թեղկենը միշակ մեծության է: Հասունանալիս մաշկը սնուած է կանաչ դույնի, պտղամիսը սպիտակ գույն ունի: Օրակեն տեսակը կոշումն ստացել է հուկիս (թթը՝ օրաղ-մանգաղ) ամսին հասունանալու հետեանքով¹⁷: Սևկենը անունն ստացել է հասուն վիճակում պտղամսի մուկ գույն սաանալու պատճառով: Պտուղը հյութալի ե քաղցր է ցինում ու երկարակյաց է: Կիսենը ուզ հասունացող, միշակ մեծության, լիսեածե, հյութալի տանձ է:

Կալին նաև քրիաչկեն, կեւապչ, փալչկեն, բալկեն և այլ տանձատեսակներ:

Հայրենի երկրի անտառները հարուսա են նաև վայրի տանձենու բաղմաղան տեսակներով, որոնք խիսա տարրերվում են ինչպես հասունության ժամկետներով, այնպես էլ համով:

Սև ծովի կովկասյան ափերը գաղթած համշենահայերը իրենց հետ բերելով տանձենիների շաա աեսակների պատվաստներ՝ զրանք տարածել են նաև նոր բնակավայրերում:

Խնձոր: Հայրենի երկրում խնձորի ամենատարածված տեսակներն էին՝ սինոպը, որը միշին մեծություն, ղեղնավուն կեղեղով քաղցրահամ խնձոր է. բերքահավաքը կատարվում է օդուատուսեպտեմբեր ամիսներին: Զգուշությամբ հավաքած այս միրզը չոր ե օդաթափանց մառաններում շատ անզամ մինչեւ նոր բերքը պահվում է: Մաոր բարձրանում է ուղղահայաց ճյուղերով, շուրջ 7—10 մետր բարձրություն: Տարի ընդ մեջ շափաղանց առատ բերք է տալիս, որի հեաետնքով անհամեցած էր լինում ճյուղերի տակ հենակներ զնել: Խանախիլ-սինոպը համով ու արտաքին տեսքով շատ քիչ է տարրերվում սինոպից ե հոտավետ է: Կանախիլ մի կողմը խիստ կարմըավուն է լինում: Ցոմուրայի խնձորը կոշումն ստացել է համանուն տեղանվան (գյուղախմբի, վիճակի) անունից: Մաոր սինոպի նման չի բարձրանությամբ յանգաղ է նշանակում:

¹⁷ Համշենահայ գյուղացիները թորքերենից փոխառումով, հուկիս ամսին օրաղ կամ օրաղ էին ասում, որը բառացի թարգմանությամբ յանգաղ է նշանակում.

զերը տարածվում են լայնակի: Թերքահավաքը կատարվում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Հասունացած մրգի կեղևը մնում է կանաչավուն, պաղամիսը զուրավի է ու թթվաշ համով: Ցոմուրա խնձորը սինոպից էլ ավելի երկար կարելի է պահել: Սառը խիստ արգասարեր է: Արտաքին տեսքով ու համով հիշեցնում է Սոլիի շրջանում աարածված սիմիրենքա խնձորին: Գավունի խնառը կամ սեխախնձորը միշին մեծության, բաց գեղնավուն գույնի է, պաղամիսը սեխի համ ունի, որի հետևանքով էլ ստացել է այդ անոնք: Երկար պահելու համար պիտանի չէ: Խարխիննորը (սյուր-էլմասի) միշին մեծության, առատաշնութ, կեղևը սպիտակավուն միրգ է:

Սալոր (առօսուն): Տարածված էին սալորի հետևալ տեսակները. պղիսի տոմուն (ստամբուլի): Հավկիթածեն, հասունացած կեղևը րաց գեղնակարմրավուն, քաղցրահամ միրգ է: Թերքահավաքը կատարվում էր օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Օնտրոֆիլը մանրահատիկ սալոր է, որի կեղևը հասունանալիս քիչ գեղնավուն է գառնում: Միշին քաղցրության միրգ է: Հասունանում է սեպտեմբեր ամսին: Հացկենը պոլսի տոմունից քիչ մեծ, հավկիթածեն, կեղևն ու պտղամիսը գեղնավուն, սակավահյութ սալոր է, որի պատճառով է ստացել է իր կոչումը: Քիրեղկենը¹⁸ (ճումիսի սալոր) վայրի սալորի մեծության ու ձեփի, համը թթվաշ պտուղ է. բերքահավաքը կատարում էին հոնիս ամսին:

Թուզ: Տրավիլոնի գավառում դժվար թե հանդիպեր սեփական տնտեսություն ունեցող մինչ հայրնտանիք, որ թղենի չունենար: Թղի լավագուն տեսակներն էին. սոխի թուզը (սողան-ինչղրի), որն այդ անունն սատացել է իր սոխանան ձեփի պատճառով: Պտուզը հյութալի և ախորժելի է, Հասունացած միրգը սկսում է ճաքճքել: Թերքահավաքը կատարում էին հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Սմբուկի թուզը (քաղցիզանի թուզ) անունն ստացել է իր երկարավուն ձեփի, մասամբ էլ՝ կեղևի գույնի պատճառով: Քաղցրությամբ չի զիջում սոխի թղին, իսկ անուշ (մուրաբա) եփելու համար գերազանցում է թղի բոլոր աեսակներին:

Խաղող: Համշենահայ գյուղերում ամենատարածվածը սև խաղողասասակներն էին: Մասմր մշակում էին նաև մաղալեզ, շավուշ, շարոխ և այլ անվանումներ ունեցող խաղողասասակներ: Հայրենի երկրում մշակած սև խաղողը համշենահայերը իրենց հեա ըերել տարածել են նաև

¹⁸ Համշենահայ գյուղացիները թուրքիրի օրինակով հոմիս ամսին նաև իրենց էին ասում, որը բառացի կեռաս է նշանակում:

Մկ ծովի կովկասյան ափերում: Այս տեսակի առավելությունը կայանում է նրանում, որ հիվանդության չի ենթարկվում: Նախ խնամքը կայանում է միայն հարմարավետ հողում մատերը (շյուղերը) տնկելու և հենակի վրա հարմարացնելու մեջ, որից հետո պարբերաբար արմատի շորս բոլորի հոգը փխրեցնում ու մոլախոտերից աղատում են: Երբ շյուղերը աճելով ու ծառի վրա փաթթվելով բարձրանում են, այլիս սպասում են մինչև բերք տալը: Այսեկութն սկսվում է հունիսին:

Համշենացիները խաղողի վագը չէին էտում, այլ աղատ թողնում էին ծառերի վրա փաթթաթվելու: Լավագուն ծառ-հենակը համարվում էր ճըկուն թթենին, սակայն ամենագործնականն ու տարածվածը լաստենին էր, որն արագ է աճում-բարձրանում: Շատ անգամ, խաղողագործը միաժամանակ անկում էր խաղողի վաղն ու նրա մոտ՝ լաստենու տնկին: Մինչև վաղի րերք աալը, լաստենին այնքան է մեծանում, որ մարգն ազաւարձրանում էր նրա վրա ու հավաքում խաղողի բերքը: Խաղող տապակ էին» (փաթթաթում էին) նաև աանձի, խնձորի, բալի, ինչպես նաև խողկաղոնու, եղևնու, մաշմարքի ու այլ ծառերի վրա:

Սնտառային (իայրի) պատղներ: Անտառամերձ վայրերում ապրող համշենահայերի համար շոշափելի տնտեսական աջակցություն էր անապային պտուղների, հատապտուղների հավաքելը: Դա խիսա կարենոր հանգամանք էր, հաակապես մարարաների համար, որոնք վարձակալած հողերի վրա իրավունք շունեին պաղատու ծառեր աճեցնել: Հայրենի երկրի անտառները հարուստ էին մաշմուրքով, բնկույղով, վերի (վայրի) կաղինով, տանձով, տոմունով, խնձորվ և այլն: Հատապտուղներից առաջ էին սատոնի (սատանայի) և ավաղը (հոն, գրգրլշուղ), ջատվի լիիլը (մասուր), ծովափնյա քարքարոսա լանջերում՝ սնտառախանան: Թիուտներում առատ տծում էին սկ ու կարմիր մերեավաղը (եաղարշ), ծողը¹⁹ (մոշ), վերի մորան (վայրի ելակ), մոմու լիիլը (ալոճ)²⁰:

Անտրախանայի պտուղը հիշեցնում է միշին մեծության գնդածե ընաանի ելակին: Աճում է նույնանուն թփի վրա: Սնտրախանայի թփերսկ հարուստ էին Տրավիլոնից արևելք գանվող գովաթա կողմած վայրի քարքարոսա լեռնալանջերը:

Կովկասի ծովափնյա վայրերի (Սուխումից

¹⁹ Ժողն աճում է մաղալի փուշ կողմող սորբ փշերով գալարվող փշավաղի վրա

²⁰ Ալոճենին 5—7 մետր բարձրության ծառ է, ծանյակածե տերեներով, սկ ու կարմիր փշածե հատապտուղներով: Սպիտակ ծաղկները հաճելի բուրմունք ունեն ու մեղրապատ են: Ալոճենու մեղրը օժաված է բուժական հատկություններով:

նովորոսիյակ) կլիման ու հողի մակերևոց շատ չնշին տարրերություն ունեն հալքենի երկրի նույն պայմաններից, Այսաղի անտառները նույնպես հարուստ են վերոհիշյալ վագի պտուղներով ու հատուպատճերով։ Հարկ է, մատնանշել, որ արդ վայրերը նախկինում եղել են առջական բնակիչների՝ չերքեղների, արխազների բնակվայրերը, սրոնց թուրքերը նահանջելիս բռնությամբ տարել են հեաները. Նրանց սշակած ալգիներն ու դաշտառու ծառերը մնացել էին անխնամ։ Մինչեւ հիմա էլ անտառներում հանդիպում են մշակովի ինձորի, սալորի ծառեր ու խաղողի որթեր, Կովկասյան տոռափնյա հողամասերում ապրող համշենայերը առատությամբ օգավել ու ամժմ էլ օդուղում են այդ բարիքներից։

Այլեւկոր (Մրգահավաբ)։ Ինչպես մշակովի, այնպես էլ անտառային պառզեներ հավաքելու հումար դորժտծված դորժիքներն ու անոթները աարերաւթյուն շունեին իրարից, Բարձր ծառերից պտուղ հավաքելու համար անհրաժեշտ էր ունենալ փոքր քրոց կամ գերենդել, մեծ կողով (կալար), կողոց, առնիշ (բոշ), կոլառ, թոկ և ալլու։

Դերենդելը կոնաձե փոքր քրոց է, բարձրությունը 50—60 սմ, վերնամասի (բերանի) տրամագիծը 30—35 սմ, հիմքին ամրացրած է քոփուց (փայտե գունդ), այնպես որ ցած զնելիս կողքի տեսք է պառկեցնել կամ կախել Բոնակը՝ կանթը ճկուն և ղիմացկուն ճիսլոտից է, Սառից պատուղ հավաքելու համար, թոկի մի ծայրը կապում են ղերենդելի կանթին, լյուսը հետը վերցնելով բարձրանում ծառի վրա. ներքեսում մնացողը թոկը օդակում, անց է կացնում թոփուղի վղին, որպեսզի վեր քոշելիս թոկը ծառի ճլուղերին լինուցին, ապա կոկառով կախ աալիս հարմար տեղից ու սկսում պտղաքաղը։

Առնիշը (բոշ) 2—3 մետր երկարությամբ, ծայրը երկճուղանի (մատ) պինդ ձող է, Մատերի երկարությունը, բատ ալդեպանի ցանկության՝

25—40 սմ։ Մատերի ծայրերը կապում են իրար պատ չորս բոլորը դիմացկում կառրից տոպրակածե կարում և առնիշը պատրաստ է։ Առնիշով պառուղ քաղում, պարպում են դերենդների մեջ և ցված դերենդները թոկից կախ տալով իշեցնում են գեաին, Քաղողի օգնականը դդուշությամբ պտուղը պարպում է կալարի կամ այլ ամանի մեջ, թոկը օղակում, անցկացնում դնոիկի վրա, բաց թողնում վերե։

Երկրորդ տեսակի առինչը 20—25 սմ երկարության, 15—20 սմ լայնության հավկիթածե տափասակ է, որի եղորին շորշանակի ամրացնում են 10—12 սմ երկարության երկշարք փայտայա ցերեր, Ցերերի հեռավորությունն իրարից 15—20 մմ է, Առնիշի մատներով բռնում են պտուղը, ուղրելով կամ հուա տալով այն պոկում ծառից, Այս վերջինը մեծաքանակ պտղահավաքի համար ձեռնաու է։

Համշենցի մարարան թուրքիալում ու համշենայ վարձակալը ցարական Ռուսաստանում հողի օգաագործման հարցում հավասար պայմանների մեջ էին գտնվում։ Առաջինը թուրքիալում, երկրորդը Ռուսաստանում իրտվոնք լունեին սեփական պտղառու ծառ տնկելու կամ քարաշեն տուն կառուցելու Տնտեսական այդ ծանր դրությունից համշենահայությունը փրկվում է շնորհիկ խորհրդային իշխանության հաղթանակի։ Կարճ ժամանակաընթացքում նախկինում ընշաղորկ համշենահայերը դարձան սեփական պտղառու ծառերի ու խաղողի այդիների աեր։ Սոյիի շրջանում լայն տարածում սաացավ հըշակավոր քրանսիական սե սալորը, Արխագիհյում րազմաթիվ համշենահայեր հիմք զրին նարինը, կիարոնի, մանդարինի այդիների, Ամրուց ծովափում (Արիապիա, Կրասնոլարի մարդ) ընդարձակ աարածություններ ծածկվեցին խնձորի, տանձի, գեղձի, կեռասի և այլ սկսուղների այդիներով։

3. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը։ Հայրենի երկրում անտառապահությունը համշենցի գյուղացիների հիմնական դրազմունքներից մեկն էր, թեկուղ աղքատ ու սակավահող, այնուամենայնիվ, յուրաքանչյուր բնտառիք մեկ կամ երկու կթան կով ունենում էր։ Հացամթերքներին հավասար՝ կաթնեղենը համշենցի գյուղացու ամենօրյա ու ամենաէական սննդի աղըլուրներից մեկն էր։ Հսկայական աարածություններով անմարդաբնակ լեռնային զանդվածներն ու արոավայրերը նպաստում էին անասնապահության դարդացմանը։

Արոտավայրերն ըսա իրենց հեռավորության, բնական դիրքի ու կլիմայական պայմանների կա-